ծութեանց։ Ողջ լե՛ր։ Գրեցաւ ի թվականութեանս հայոց ՌՃԻ երրորդումն եւ ամսեանն ի Ցուլիսի ի չորրորդումն ամսոյն աւուր, ընդ հովանեաւ Սրբոհոյ Աստծոյ. եկեղեցոյ, որ ի մայրաքաղաքի Կոստանդնուպոլսի։

1671
Յաւ. 4

Թ. 51ա.— ՅԱԿՈԲ ԿԹՂԿՍԻ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆ Է... Գրեցաւ օրհնութեան եւ նուիրագումար նամակս ի թուականութեանս ՌՃԻԱ? յամսեանն Նոյեմբերի որ օր երեք էր ամսոյն, ի նաւասարդի քսաներորդի եօթներորդի։

Թ. 54ա.— ՅԻ ՔԻ. ԾԱՌԱՅ ՅԱԿՈԲ ԿԹԿՍԷ. մեղադրանօք ծանիր խարդախ եւ նենգաւոր Նիկողայոս մեք զքեզ այդպէս չիդիտէաք...։ Գրեցաւ թվին ՌՃԺԹ Ցունիս ամսոյ քսան եւ ութ ի դուռն Հրեշտակապետ եկեղեցւոյ։

1670

Թ. 59ա.— ՅԱՅՍ ԳԻՐՍ ՏԵԱՌՆ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՅԵՂԻԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՄՆ.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ Կաթողիկոսէ եկեղեցւոյ ամենայն Հայոց, եւ Պատրիարք սրբոյ Աթոռոյ Էջմիածնի, յորմէ ժամանեսցի օրհնութիւն հանդերձ ողջունական սիրով ի վերայ իսկապէս սիրեցեալ եղբօրդ Եղիազար Հոգեւոր Տիրոջ հանդերձառ քեզ եղելով միաբանութեամբ ի Քրիստոս խնդալ յարազուարճ բերկրանօք, ամէն։ Յոր շնորհք եւ խաղաղութիւն անսկզբնական Էին, զթութիւն եւ ողորմութիւն նորին համադոյական Բանին, սէր եւ առատ բարերարու-